

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԿԱՌՆՈՒՄԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ2 նիստում

Կազմեց համայնքի ղեկավար՝  
Արծրունի Սուրենի Գաբոյանը



Կառնուտի համայնապատկերը

Ի՞նչ է զարգացման ծրագիրը.

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարություն և հիմնական նպատակներ:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Ծրագրի ամփոփ տեղեկագիր
5. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
6. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշներ:
7. Եզրափակում:

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածք:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկ:

Կառնուտի գյուղական համայնքը գտնվում է Շիրակի մարզի հյուսիս-արևելյան հատվածում, Փամբակի լեռնաշղթայի ստորոտին, ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, լանդշաֆտը՝ լեռնատափաստանային, որը բարենպաստ է հողագործության ու անասնապահության համար:

Գյուղի բնակատեղին ունեցել է շատ հին պատմություն, ըստ երևույթին այն մի քանի անգամ բնակեցվել ու լքվել է մեզ անհայտ պատճառներով: Պատմությունը սկսվում է դեռ բրոնզե դարի ժամանակներից, որի վկայությունն են Սուրբ Մինաս անվանումը ստացած սարի արևմտյան ստորոտին պեղված բրոնզե դարի բնակատեղիները:

Բնակավայրի հնության վկայություններ են հեթանոսական ժամանակների ու միջնադարյան գերեզմանոցների գոյությունը, IV դարում կառուցված բազիլիկ եկեղեցին, որը ցավոք անուն էլ չունի:

Նախորդ դարասկզբին դեռ գործող եկեղեցին դարձել է սովետական աթեիզմի զոհը, քանդել ու շինանյութը օգտագործել են նոր կազմավորվող կոլտնտեսության շինությունների կառուցման համար:

Հին բնակատեղին տարածված է եղել 50-60 հա տարածքի վրա: Առանձին տեղերում բացված հիմքերը ունեն 2 մ լայնություն, շարված են 1x 1x 2 չափերի հասնող տաշված քարերով:

Գյուղի հյուսիսային կողմում գտնվող սարի բարձրադիր լանջին պահպանվել է կառուցված ջրամբարի երեք պատը, առանձին տեղերում էլ ջրագծի հետքերը, որոնցով բնակավայրը ապահովվել է խմելու ջրով: Այնուհետև, այդ շինությունը դարձել է ճգնավայր, որտեղ ճգնել է Մինաս անունով ճգնավորը, ում անունով էլ տեղաբնակները սարը անվանել են Սուրբ Մինաս, իսկ ճգնավայրը դարձրել սրբատեղի, ուր տանող արահետը միշտ թարմ է ոտնահետքերով:

Գյուղը վերջին անգամ բնակեցվել է 1828-1829 թ.թ., Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից գաղթած մեր նախնիների կողմից ու անվանվել Դիրաքլար: Անունը օտարածին է, որը նշանակում է սյուններ, ըստ երևույթին նկատի են ունեցել գյուղը երեք կողմից շրջափակող բարձր սարերը: 1946 թ. գյուղը վերանվանվել է Կառնուտ: Այս անգամ հիմք է հանդիսացել բնակավայրի տարածքում փարթան ու բարձր աճող կառ անվանմամբ փշի տարատեսակը, որը Երևանից ժամանած հնագետները տեսնելով՝ ասել են Կառնուտ է: Գյուղի դպրոցը ունի 110-ամյա պատմություն: Սկզբում տարրական, հետո յոթնամյա, ութնամյա, իսկ 1990 թվականից՝ միջնակարգ:

Մեր սերունդը հիշում է չորս դպրոցի շենքի կառուցում, վերջինը 2002 թվականին:

Մինչև 1924 թ., երբ կառուցվեց Շիրակի ջրանցքը, գյուղի հողամասերը ջրովի չէին ու տալիս էին ցածր բերք: Իսկ 1970-ական թվականներին, երբ կառուցվեց Կառնուտի ջրամբարն ու սնուցող ջրանցքը, որն անցավ բնակավայրի տարածքով, արդեն հիմնովին փոխեց գյուղացու կենսակերպն ու գյուղի տեսքը: Նախկինում անհրապույր տեսք ունեցող ու հաշված ծառերով գյուղը վերածվեց ծաղկած բուրաստանի, գեղեցիկ առանձնատներով ու բանջարանոցներով:

Վերջին 25 տարիների ընթացքում գյուղի բնակչությունը ավելացել է 400 մարդով: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Վերջին տարիներին մշակվում են տեխնիկական մշակաբույսեր, նկատվում է անանազլխաքանակի դինամիկ աճ:

Երբեմնի մշակութային հարուստ կյանքով ապրող գյուղը 1988 թ. երկրաշարժի պատճառով կորցրեց մշակույթի ու սոցիալ-տնտեսական նշանակության օբյեկտները, փլվեցին ու վթարային դարձան մի քանի տասնյակ բնակարաններ:

Սակայն երկրաշաժը չկարողացավ ընկճել աշխատասեր ու կամքով օժտված կառնուտցուն ու նա արդեն 20 տարի է նվիրումով վերականգնում է իր ծննդավայրը: Գյուղը կամաց-կամաց կառուցապատվում ու բարեկարգվում է:

Մեր ամենաթանկ կապիտալը մարդն է, ով պետք է սիրի երկիրն ու գյուղը, հանուն մեր պետության ու ժողովրդի բարորության:

		թ/թ	2013	2014	2015	2016
		Բնակչության թիվը	1128	1143	1148	1153
		Տղամարդ	525	529	533	537
		Կին	603	614	615	616
Կրթությունը	Բարձրագույն	45	51	59	64	
	Միջն. մասնագիտական	181	182	187	195	
	Միջնակարգ	293	270	284	340	
	Ութամյա	201	190	199	203	
	Տարրական	69	65	63	58	
Նպաստառուների թիվը, ընտանիք		11	11	11	10	
Տնտեսությունների թիվը		252	252	250	250	
Ծնունդ		8	18	16	12	
Մահ		6	5	7	4	
Արտագնա աշխատողներ		82	94	113	115	
Ժամանակավոր բացակայողներ		117	122	126	128	
Ժամանակավոր բնակվողներ		54	49	52	50	
Դպրոցական տարիքի 7-17 տարեկաններ		138	142	135	137	
Ծնողազուրկ երեխաներ		8	8	10	12	
Աշխատունակներ		620	624	632	637	
Թոշակառուներ		98	94	96	100	
Հաշմանդամներ		35	36	38	38	
Բնակարանի կարիքավորներ		46	45	49	52	

ԺՈՂՈՎԴԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## *Ի՞նչ է զարգացման ծրագիրը*

Ձարգացման ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ - տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ, որը նախատեսված է ռազմավարական քաղաքականությամբ, համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

### *Տեղական ինքնակառավարման մարմիններ*

2016 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Կառնուտի համայնքի ղեկավար է վերընտրվել Արծրունի Սուրենի Գաբոյանը, ծնված 1960թ, ունի բարձրագույն կրթություն : Նա կազմավորել է աշխատակազմ, որի աշխատակիցների թվաքանակն ու հաստիքացուցակը, ինչպես նաև համայնքի ավագանու կազմը ներկայացվում է ստորև:

#### *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ՝*

Հ/Հ	Ազգգնուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցականությունը
1	Վարդյան Մեխակ Ռազմիկի	Համայնքի ղեկավարի տեղակալ	1959	միջնակ. մասնագ.	անկուս.
2	Բորիկյան Խաչիկ Մնացականի	Աշխատակազմի քարտուղար	1987	բարձրագ.	անկուս.
3	Մովսիսյան Սյուզաննա Կարապետի	Գլխավոր մասնագետ ֆինանսիստ	1990	բարձրագ.	անկուս.
4	Ազիզյան Համբարձում Դավթի	Առաջատար մասնագետ	1987	բարձրագ.	անկուս.
5	Ապիկյան Կարինե Հովհաննեսի	Հարկային գործակալ	1954	միջնակ. մասնակ	անկուս.
6	Ազիզյան Մանուշակ Լուզայի	Ակումբավար	1968	միջնակ. մասնակ	անկուս.
7	Կարապետյան Անահիտ Վոլոդյայի	ՕԿՋ պահակ կարգավորիչ	1958	միջնակ. մասնակ	անկուս.
8	Մակարյան Անյա Զավենի	Հավաքարար	1951	միջնակ. մասնակ	անկուս.

#### *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ՝*

Հ/Հ	Ազգգնուն, անուն, հայրանուն	Զբաղվածությունը	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցականությունը
1	Ապիկյան Գևորգ Մարտինի	Մեխանիկատոր	1978	միջնակ.	անկուս.
2	Գաբոյան Ժիրայր Հովհաննեսի	Հողագործ	1981	բարձր.	անկուս.
3	Գրիգորյան Յուրիկ Սասունիկի	Բժիշկ	1952	բարձր.	անկուս.
4	Հարությունյան Հարություն Հայկազի	Մեխանիկատոր	1978	միջնակ. մասնագ.	անկուս.
5	Հովհաննիսյան Հրայր Ալբերտի	Հողագործ	1956	միջնակ.	անկուս.

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

Համայնքային սեփականության գույքի ցանքը բերված է հավելված 2-ում:

## Կոմունիկացիոն համակարգեր

Համայնքը սնուցող ջրագծով գյուղ է մտնում վարկյանում 1.3 լիտր խմելու ջուր, որը օրական կազմում է մոտ 100 հազար լիտր: ՕԿՁ-ի տարողությունը կազմում է 50 հազար լիտր: Համայնքի խմելու ջրի պահաջարկը օրական կազմում է 180-200 հազար լիտր: Գյուղամիջյան 2 մշտական հոսող և համայնքի բնակիչների բակերի թվով 28 աղբյուրները, համայնքի բնակիչների կողմից ջրահաշվիչներ չտեղադրելը, ինչպես նաև ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով հաճախակի տեղի ունեցող վթարները, հնարավորություն չեն տալիս համայնքն ապահովելու շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Ջրամատակարարումը համայնքում կատարվում է գրաֆիկով, օրական 8 ժամ՝ առավոտյան և երեկոյան ժամերին:

Ընդհանուր առմամբ համայնքի կոմունիկացիոն կառույցներն ունեն 45-55 տարվա վաղեմություն և կարիք ունեն կապիտալ վերանորոգման:

Անհրաժեշտ է կատարել փողոցների նորոգում, ջրատար առուների բետոնացում, ջրահեռացման ապահովում, փողոցների լուսավորության անցկացում ու հեղեղատարների մաքրում:

### Համայնքի կոմունիկացիոն կառույցների նկարագիրը

Զ/Զ	Անվանումը	Հալման միավոր	Խորություն	Կատարման ընթացքի վիճակ	Ենթակա է վերանորոգման	Ժամանակակից վերանորոգված	Նոր կառուցված	Ծանոթություն
1.	Կամուրջներ Ախուրյանի խճուղի Կամոյի սելավատար Շիրակի ջրանցքի վթարային ջրատար Ջրամբարի վթարային ջրատար	հատ հատ հատ հատ	3 1 2 2	1974 1976 1973 1973	2 1 2 1			
2.	Ներհամայնքային ճանապարհներ	կմ/մ <sup>2</sup>	9.14/ 63580	1950- -1990	6.9/ 43800	1.24/ 8680	1/7000 գերեզ. ճան.	
3.	Խմելու ջրի ՕԿՁ	հատ	1	1971		2007 թ.		
4.	Խմելու ջրի ներտնտես. ցանց	գծմ	10500	1961 1991	7000	1300 գծմ 2006-2008	2200 գծմ 1990	
5.	Ոռոգման ներտնտեսային ցանց	գծմ	14100					
	Փակ ջրագիծ		7200	1978 թ.	1440 գծմ		2000 թ. 5760 գծմ	
	Բաց ջրագիծ		6900		900 գծմ ապամոն- տաժման, 2900 գծմ վերանոր.	2007 թ. 1400 գծմ երկաթբետ. կիսախող.	2000 թ. 1640 գծմ մետաղյա կիսախող.	Ապամոնտաժման ենթակա ջրագիծը երբեք չի օգտագործվել (կառուցվել է փոխարինող համակարգ)
6.	Տնային հեռախոսակապ	հատ	10					

### Շրջակա միջավայրի պահպանություն

1988 թ. երկրաշարժից հետո, Գյումրի քաղաքից ու Ախուրյանի նախկին շրջկենտրոնից մեծ քանակությամբ փլատակների աղբ է տեղափոխվել համայնքի տարածք՝ անօգտագործելի դարձնելով 10 հեկտարից ավելի հանդամաս: Այն անհրաժեշտ է հարթեցնել ձորակներում ու ծածկել հողով:

Չնայած գյուղապետարանի կողմից համայնքում կուտակված տնտեսական աղբի հեռացման համար հատկացված է տարածք (հին չգործող քարհանքի տարածքում, փոսի մեջ) և կազմակերպվում է կենտրոնացված աղբահանություն, սակայն դեռևս կան օրինախախտման դեպքեր (անհարգի միջավայր կեղտոտողներ):

Համայնքի տարածքում կան 92.5 հա անտառային հողեր, որտեղ դեռևս ոչ մի ծառ չի աճել:

Սարերում կան բնական աղբյուրներ, որոնց ջրերը ապարդյուն հոսում և կորչում են ձորերի ավազուտներում:

«Բոբիկներ» կոչվող հանդամասի բնական աղբյուրի ջուրը նպատակահարմար է ամառվա ամիսներին օգտագործել անտառհիմնման նպատակով և կարելի է հիմնել 5.4 հա անտառ:

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շինարարություն	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
Բնակարանային	0	0	1	0
Արտադրական				

### Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 192 առանձնատուն 13 հազ, քմ. մակերեսով: Անապահով ու բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը 50-ից ավել է, որը տարեցտարի աճում է: Կան կիսավթարային շենքեր, որոնք ունեն անրացման վերանորոգման կարիք: Երեք բնակարան վթարային են, 26-ը ենթակա են ընթացիկ վերանորոգման, 16-ը ամրացված են, 64 բնակարան կառուցվել է 1989-2004 թ.թ, 82 բնակարան երկրաշարժից տուժել էին 10-15%-ի չափով և համաձայն մասնագիտական եզրակացության ենթակա են բնակության:

1992 թվականից նորաստեղծ ընտանիքներին հատկացվել է թվով 60 տնամերձ հողամաս, բնակարան կառուցելու համար: Մինչ օրս այդ հողամասերում կառուցվել է 9 բնակարան և 2 կիսակառույց:

### Համայնքի հողային հաշվեկշիռը

- Համայնքի վարչական տարածքը՝ 1940,7 հա
- որից՝
- Վարելահողեր՝ 671,7 հա
- Արոտավայրեր՝ 909,2 հա
- Անօգտագործելի հողեր՝ 625,64 հա
- Դաշտային ճանապարհներ՝ 22,4 հա
- Արտադրական մաս՝ 1,2 հա
- Տնամերձ հողեր՝ 54 հա
- Ոռոգվող հողեր՝ 512 հա
- Գյուղամիջյան փողոցներ՝ 6,3 հա
- Սեփականաշնորհված հողեր՝ 565 հա
- Հուշարձանի տարածք՝ 0,1 հա
- Դպրոցի տարածք՝ 0,53 հա

- Գերեզմանոց՝ 3,2 հա
- Մարզադաշտ՝ 0,6 հա
- Գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 252 հա
- Սեփականաշնորհված մեկ հողաբաժնի չափը՝ 1.45 հա

### *Գյուղատնտեսություն*

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր՝ խոտ, կարտոֆիլ, բանջարեղեն, եգիպտացորեն: Ավելացել են տեխնիկական մշակաբուսերի ցանքատարածությունները: Արտադրվում են առվույտի, կորնգանի, սեղանի ճակնդեղի, գազարի, կանաչիների սերմեր: Գյուղում մշակվում է մարզում մշակվող սեղանի ճակնդեղի ցանքատարածքի 40%-ը: Համայնքում ավելացել են տնամերձ այգիների տարածքները:

Ջրովի հողատարածքները մշակվում են ամբողջությամբ, իսկ անջրդի տարածքների մոտ 60%-ն անմշակ է: Սարում գտնվող վարելահողերը մոտ 20 տարի է չեն մշակվում, իսկ բարձրլեռնային արտոները օգտագործվում են 15-20%-ով:

Վերջին տարիներին նկատվում է անասնազխաքանակի դինամիկ աճ: Սակայն թե հողագործության և թե անասնապահության բնագավառներում գերակշռում է էքստենսիվ զարգացումը, ինչի հետևանքով համայնքի բնակչության եկամուտները գրեթե չեն ավելանում:

Համայնքը ապահովված է գյուղատնտեսական տեխնիկայի, մեքենաների, գործիքների ու հացահատիկահավաք կոմբայնների անհրաժեշտ քանակությամբ, որը հնարավորություն է տալիս հողը ցանել, մշակել ու բերքահավաքը կազմակերպել ժամանակին:

### *Արտադրություն*

Համայնքում գործում է «Գաբոյանի Մուշեղ» գյուղատնտեսական ՍՊԸ-ն, որն զբաղվում է կաթի արտադրությամբ ու վերամշակմամբ՝ տարեկան մոտ 20 տոննա պանրի արտադրությամբ: Արտադրանքը սպառվում է տեղական շուկայում: «Գաբոյանի Մուշեղ» ՍՊԸ-ն ապահովում է 5 աշխատատեղ:

Համայնքում գործում է նաև Կամոյի դատցիտային տուֆի արդյունահանմամբ ու վերամշակմամբ զբաղվող «Վարդան աղբյուր» ՍՊԸ-ն՝ տարեկան մոտ 1000 խմ վերամշակման հզորությամբ: Պատրաստի արտադրանքը սպառվում է տեղական շուկայում: «Վարդան աղբյուր» ՍՊԸ-ն ապահովում է 8 աշխատատեղ:

### *Կրթություն*

2008թ. սեպտեմբերի 1-ից դպրոցում գյուղապետարանի համաֆինանսավորմամբ գործում է նախակրթարանը, որտեղ ընդգրկված են 10 նախադպրոցական տարիքի երեխաներ:

2002 թվականին շահագործման է հանձնվել գյուղի միջնակարգ դպրոցի շենքը, ուր սովորում են 125 աշակերտներ: Դպրոցը համալրված է 21 մասնագետ մանկավարժներով (1 ուսուցչի հաշվով 7 աշակերտ), այն ապահովված է խմելու ջրով, գործում է կոյուղին: Սակայն թերի է տարածքի բարեկարգումը, չունի նիստերի դահլիճ, մարզադահլիճ: Ջեռուցումն իրականացվում է էլեկտրաջեռուցիչներով՝ այն էլ միայն դասասենյակներում, սանհանգույցներն ու միջանցքները չեն ջեռուցվում:



## *Մշակույթ, սպորտ*

Գյուղի մշակույթի տունը գործում է ժամանակավոր կառույցում, որն ունի վերանորոգման ու կահավորման կարիք: Իր հարմարություններով ու հնարավորություններով այն ավելի շատ նման է հավաքատեղիի, քան մշակույթի տան:

Համայնքի մարզական կյանքը պասիվ է, մարզադաշտը ունի ցանկապատման ու նորոգման կարիք, անհրաժեշտ է ստեղծել կանաչ ծառապատ գոտի, լուսավորել, անցկացնել խմելու ու ոռոգման ջրացանց, կառուցել նստատեղեր:

## *Առողջապահություն*

Բուժկետը տեղակայված է հիմնական շինությունում, բարենորոգված, ջրով և կոյուղով ապահովված: Ունի 2 բուժ աշխատող: Ներդրվել է ընտանեկան բժշկի համակարգ: Ժամանակին իրականացվում են մանկահասակ երեխաների պարտադիր բուժ միջոցառումները: Բուժ աշխատողների կողմից ամենօրյա հսկողության տակ են նորածին երեխաները: Ամեն շաբաթ Ախուրյանի պոլիկլինիկայի բժիշկների կողմից բուժ. կետում կազմակերպվում է համայնքի բնակչության ընդունելություն:

## *Համայնքի ուժեղ կողմերը*

- Համայնքն ունի զարգացման մեծ ներուժ իր բնական ու մարդկային ռեսուրսներով
- Գյուղն ունի աշխարհագրական լավ դիրք, թիկնած սարերի փեշին թեքության վրա, որն ապահովվածություն է հեղեղումներից:
- Համայնքն ունի 5-րդ դարի հնադարյան եկեղեցի, որն ունի վերանորոգման ու խնամքի կարիք:
- Հողերը բերրի են ու ոռոգվող, արոտները՝ բավարար, բնակլիմայական պայմանները՝ բարենպաստ:

## *Համայնքի թույլ կողմերը*

- Գյուղամիջյան ու դաշտամիջյան անբարեկարգ ճանապարհների առկայությունը:
- Գազաֆիկացման բացակայությունը:
- Մշակույթի տան, մարզադահլիճի, կենցաղային սպասարկման որևէ ծառայության, վարչական շենքի բացակայությունը:
- Մեծ քանակությամբ աշխատանք փնտրողների առկայությունը:
- Խմելու որոշ ջրագծերի անմխիթար վիճակը:
- Գիշերային լուսավորության ցանցի ավելացում:
- Երաժշտական ու գեղարվեստի դպրոցի բացակայությունը:

## *Համայնքի հնարավորությունները*

- Աշխատուժի առկայությունը:
- Գյուղտեխնիկայի առկայությունը:
- Բարձր բերքատվություն ապահովող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի առկայությունը:

## *Համայնքին սպառնացող վտանգները*

- Հոգևոր-մշակութային կյանքի իսպառ վերացումը:
- Խմելու ջրագծերի անմխիթար վիճակը:
- Ներհամայնքային ճանապարհների մի մասի անբարեկարգ լինելը
- Հարկերի վճարումից խուսափող բնակիչների առկայությունը:

## *Համայնքի ռազմավարությունն ու հիմնական նպատակները*

### *ԿՈՍՈՒՆԻԿԱՑԻՈՆ ԽՆԴԻՐՆԵՐ*

- Գազաֆիկացում,
- Շուրջօրյա ջրամատակարարման ապահովում,
- Ներհամայնքային բոլոր ճանապարհների բարեկարգում,
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում,
- Ջրահեռացման ապահովման նպատակով հեղեղատների պարբերաբար մաքրում,
- Հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնում և վերակառուցում,
- Ջրատնտեսական համակարգերի կառուցում,
- Կամուրջների վերանորոգում,
- Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում,
- Փողոցային լուսավորության համալրում,
- Դպրոցի կաթսայատան ու ջեռուցման համակարգի կառուցում,

### *ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ*

1. Մշակույթի տան կառուցում,
2. Մանկապարտեզի շենքի կառուցում,
3. Գյուղապետարանի շենքի կառուցում,
4. Դպրոցի մարզադահլիճի կառուցում,
5. Մարզադաշտի կառուցապատում,
6. Գյուղի հասարակական կենտրոնի կառուցապատում,
7. Մանկական խաղահրապարակների կառուցում, խաղասարքերի տեղադրում,
8. Աղբյուրների կառուցում,
9. Կանաչ գոտիների հիմնում,
10. Փոստի շենքի կառուցում,
11. Դպրոցի շենքի վերանորոգում:

*ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ*

1. Կաթի ընդունման ու վերամշակման արտադրամասի կառուցում,

*ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

1. Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում,
2. Պահեստային շինությունների կառուցում (վերանորոգում),
3. Գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ եղանակների խթանում:

*ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Հիփոթեքային վարկավորման միջոցով հին ու կիսավթարային բնակարանների վերանորոգում-ամրացում, նոր բնակելի տների կառուցում:

*ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՄՊՈՐՏ*

1. Հայաստանի Հանրապետության տոների ու հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում,
2. Գեղարվեստի դպրոցի հիմնում,
3. Մշակույթի տան գույքավորում,
4. Գրադարանի գրքային ֆոնդի համալրում,
5. Սպորտ գույքի (նաև ձմեռային) ապահովում:

*ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

1. Կենտրոնացված աղբահանության կազմակերպում,
2. Շինարարական աղբով լցված 10 հա տարածի մաքրում,
3. Ամենամյա ծառատնկում, դաշտապաշտպան գոտիների հիմնում,
4. 5.4 հա անտառհիմնում,
5. Հողերի և արոտների արդյունավետ ու նպատակային օգտագործում:

# ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՐԿԱԾ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ  
ԵԶՐԱՄԱՅԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանի տարածքն ամբողջացնել մշակույթի տան ու գյուղապետարանի շենքի հարակից տարածքով (2000 քմ), շրջափակել մետաղական կոնստրուկցիայի ցանկապատով ու եզրամայթերով, թարմացնել ներքին եզրամայթերն ու սալարկել հետիոտն մասը, կառուցել ցայտաղբյուր ու նստարաններ, կառուցապատել ծաղկանոցներ (250 քմ):

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրագործումը նպատակ է հետապնդում.

1. Վերանորոգել ու բարեկարգել ՀՄՊ զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանը կից տարածքով.
2. Համայնքում 2000 քմ-ով ավելացնել կանաչ գոտիների տարածքը.
3. Բարեկարգված տարածքից 200 քմ-ը դարձնել մանկական խաղահրապարակ, տեղադրելով խաղասարքեր, որոնց իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին՝
  - 140 գծմ մետաղյա կոնստրուկցիայով ցանկապատի կառուցում,
  - 200 գծմ եզրամայթերի բարեկարգում ու սալարկում,
  - 300 քմ տարածքի ասֆալտապատում,
  - Ցայտաղբյուրի կառուցում,
  - Ծաղկանոցների (250 քմ) կառուցում:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի իրականացման անհրաժեշտ ֆինանսական միջոցները (համաձայն կատարված չափագրումների, հաշվարկած շինանյութն ու աշխատուժը ըստ ՍԱԴ նորմատիվների), գնահատվում են 1.75 մլն դրամ:

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

## ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի կատարման ժամկետ է սահմանվում 2009 թ. ապրիլ- մայիս ամիսները:

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ծրագրի իրականացնողն ու վերահսկիչը համայնքի ղեկավարի կողմից ստեղծած գնումների հանձնաժողովն է: Ծրագրի կատարման պատասխանատուն՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի I –ին կարգի մասնագետ Մեխակ Վարոսյանը:

## ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ծրագրի իրագործմամբ համայնքի հասարակական կենտրոնի 2000 քմ տարածք կդառնա բարեկարգ ու կանաչապատ գոտի:

Տարածքի կառուցապատումը կապիտալ շինության տեսքով է ու մնայուն, որի մի մասը խաղահրապարակով ու ծաղկանոցներով, ապագայում կօգտագործվի որպես մանկապարտեզի տարածք:

Համայնքը կունենա վերանորոգված ու խնամված հուշարձան:

# ԾՐԱԳԻՐ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Մարզադաշտը կառուցվել է 1987 թ. գյուղի հարավ-արևմտյան հատվածում: Ծրագրով նախատեսվում է դաշտի հարթեցում ու սևահողի ծածկույթի ապահովում, 380 գծմ ցանկապատի կառուցում, 50 գծմ պաշտպանիչ պատի կառուցում, խմելու ու ոռոգման ջրի ապահովում, դարպասների ու նստատեղերի կառուցում, ծառատնկում:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակաուղղված է բարեկարգ ու կառուցապատված մարզադաշտ ունենալուն: Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է՝

- Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր,
- Հայտ ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետարանին ծրագիրը ՀՀ 2018 թ. բյուջեի «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում ընդգրկելու համար,
- Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ներդրումը ծրագրի իրականացման համար,
- Լուծում տալ հետևյալ խնդիրներին.

- խնդիր 1. Կառուցել 380 գծմ երկարության ցանկապատ,
- խնդիր 2. Կառուցել 50 գծմ երկարության պաշտպանիչ պատ,
- խնդիր 3. Հարթեցնել մարզադաշտն ու ապահովել սևահողային շերտով,
- խնդիր 4. Կառուցել նստատեղեր,
- խնդիր 5. Կառուցել դարպասներ,
- խնդիր 6. Կառուցել աղբյուր ու ոռոգման համակարգ,
- խնդիր 7. Կազմակերպել ծառատնկ:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

Ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները ըստ հաշվումների (շինանյութ, դիզ. վառելանյութ, տեխնիկայի վարձատրություն, աշխ. գործիքներ, աշխատուժ ըստ ՍԱԴ նորմատիվների), գնահատվում է 6.0 մլն դրամ, որից համայնքային ներդրումը կազմելու է 4.0 մլն դրամ:

Ծրագիրը նախատեսվում է իրագործել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով, իսկ այդ ծրագրում չընդգրկվելու պարագայում, իրականացման ժամկետը երկարաձգվելու է մեկ եռամսյակով ու ամբողջությամբ իրականացվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը իրականացվելու է 2018 թ. 2-րդ եռամսյակում:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագրի իրականացման գործը կազմակերպելու ու վերահսկելու է համայնքի ղեկավարի աշխատակազմը. պատասխանատու՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մեխակ Վարդապյան:

### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Համայնքը կունենա ցանկապատված ու կառուցապատված, կանաչապատ ու բարեկարգ մարզադաշտ, որը հնարավորություն կստեղծի բնակչությանը զբաղվելու սպորտով:

## ԾՐԱԳԻՐ 2

### ՆԵՐՅԱՍԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՅՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

#### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հատվածներում ներհամայնքային ճանապարհները վերածվել են ջրատար առուների, առանձին տեղերում էլ դրանք հատում են ճանապարհները լայնությամբ՝ դարձնելով անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել ներհամայնքային 18500 քմ ընդհանուր մակերեսով ճանապարհ, (ճանապարհի տաշտակի կառուցում, ճամփեզրին ջրատար առուների փորում, բետոնացում, ջրանցման խողովակների տեղադրում, ճանապարհի խճալցում, ավազալցում, ճանապարհի հարթեցում):

#### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել ներհամայնքային հինգ ճանապարհ, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների..

Խնդիր1.Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ըստ առանձին փողոցների.

Խնդիր2.Ներկայացնել հայտ ՀՀ Շիրակի մարզպետարան, ծրագիրը «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրում ընդգրկելու առաջարկով.

Խնդիր3.2017-2018 թ.թ. համայնքային բյուջեով ֆինանսական ներդրումներ նախատեսել ծրագրի իրականացման համար.

Խնդիր4.Զբաղվածության Շիրակի մարզային կենտրոնի հետ համատեղ աշխատանք կազմակերպել ծրագիրը համապատասխան աշխատուժով ապահովելու նպատակով.

Խնդիր 5. Կառուցել ճանապարհների տաշտակն ու հարթեցնել,

- Ջրանցման տեղերում փորել ու տեղադրել խողովակներ,
- ճամփեզրերին փորել ու բետոնացնել ջրատար առուները,
- Խճալցնել ու ավազալցնել 18500 քմ ճանապարհ ու հարթեցնել:

#### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ

Նախնական չափագրման ու հաշվարկի արդյունքում (շինանյութ, դիզ. վառելանյութ, տեխնիկայի վարձակալություն, աշխատանքյին գործիքներ, պահանջվող աշխատուժ՝ ըստ ՍԱԴ-ի նորմատիվների/տեղի ավազն ու խիճը, որը օգտագործվելու է նախկին շինհրապարակների մնացորդները, արժեքի մեջ չեն մտնում/ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 6.0 մլն դրամ, որից համայնքային ներդրումը պետք է կազմի 3.0 մլն դրամ:

#### ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2017թ. ընթացքում, N<sup>0</sup>3 փողոցը՝ 4000 քմ, N<sup>0</sup>4 փողոցը՝ 4000 քմ, N<sup>0</sup>11 փողոցը՝ 2800 քմ, ընդամենը 10800 քմ 3.6 մլն ընդհանուր գումարով:

2011 թ. ընթացքում N<sup>0</sup>10 փողոցը 5000 քմ, N<sup>0</sup>15 փողոցը 2700 քմ, ընդամենը 7700 քմ 2.4 մլն դրամ գումարով:

#### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումը իրականացնելու է համայնքի ղեկավարի աշխատակազմը:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

#### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքը կունենա ևս հինգ բարեկարգ փողոց, խճապատված ու ջրահեռացումը ապահովված:

### ԾՐԱԳԻՐ 3

#### ՂԱՇՏԱՄԻՋՅԱՆ ԾԱՆԱԿԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

##### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Ղաշտամիջյան մոտ 5 կմ երկարության ճանապարհներ անվավոր տեխնիկայի համար անանցանելի են, շատ դեպքերում դրանք ստիպված անցնում են մշակովի հողամասերի միջով ու առանձին տեղերում ճանապարհի լայնությունը դարձնում 30-40 մ, անմշակ դարձնելով 5-6 հա հողամաս:

##### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ է հետապնդում նորոգել Ղաշտամիջյան ճանապարհները, ապահովել ջրհառնացումը, ապահովել 5 մ լայնության բանուկ երթևեկելի ճանապարհ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին՝  
Խնդիր 1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր,  
Խնդիր 2. Ապահովել համայնքային բյուջեով պահանջվող ֆինանսական միջոցները ծրագրի իրականացման համար:

##### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են մոտ 7 մլն դրամ: Ծրագիրը իրականացվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

##### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թ: «Քարի տակ» տնամերձների միջնամասի ճանապարհ՝ 600 գծմ և տնամերձների արևմտյան վերջնամասի ճանապարհ՝ 450 քծմ, Շիրակի ջրանցքի երկայնքով «7-ի տակ» տանող ճանապարհ՝ 650 գծմ-ընդամենը 1700 գծմ, ծախսվող գումարը 2.0 մլն դրամ:

2017 թ. կալատեղից -«Չայիրներ» 1300 գծմ, «Ղոմա» տանող ճանապարհ 1200 գծմ, ընդամենը՝ 2500 գծմ, ծախսվող գումարը՝ 3.5 մլն դրամ:

2018 թ. «Բոբիկներ» տանող ճանապարհ 800 գծմ, ծախսվող գումարը՝ 1.5 մլն դրամ:

##### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ*

Ծրագրի իրականացման կազմակերպումն ու ղեկավարումը՝ Կառնուտի գյուղապետարան: Պատասխանատու՝ համայնքի ղեկավարը:

##### *ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

- Ծրագրի իրականացումով Ղաշտամիջյան ճանապարհները կդառնան անցանելի, կապահովվի ջրահեռացումը,
- Հողամասերը կմշակվեն ամբողջությամբ, չեն լինի մշակովի հողամասի կորուստներ:

## ԾՐԱԳԻՐ 4

### ՈՌՈԳՄԱՆ ՓԱԿ ՋՐԱԳԾԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է 800 գծմ երկարության ոռոգման փակ ջրագծի կառուցում  $d=270$  մմ լայնական կտրվածքով մետաղյա խողովակներով: Ջրագիծը անցնելու է «Այգաբաց» ջրանցքից սնվող փակ ջրագծի վերջնամասից (Կամոյի խճ.), մինչև «14 հա» կոչվող հողամաս: Վերոհիշյալ հատվածներով ոռոգման ջուրն անցնում է մոտ 1 կմ հողային հունով 3 ժամվա ընթացքում և կորուստները գերազանցում են 50%-ը:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ է հետապնդում

- Ոռոգման ջուրը հանդամաս հասցնել 10-ից 15 րոպեի ընթացքում:
- Բացառել ոռոգման ջրի կորուստները:
- Բարելավել մոտ 77 հա հողամասերի ոռոգումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ հետևյալ խնդիրներին.

- խնդիր 1. Կազմել աշխատանքների կազմակերպման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.  
խնդիր 2. Ապահովել անհրաժեշտ ֆինանսական ու աշխատանքային ռեզերվները, մինչև 2019 թ. ոռոգման սեզոնի սկսվելը աշխատանքները ավարտելու համար.  
խնդիր 3. Իրավական դաշտ բերել օգտագործվելիք խողովակների գյուղապետարանին պատկանելիության հարցը և գրանցել գյուղապետարանի հաշվեկշռում.  
խնդիր 4. Կառուցել ջրաբաշխիչ հիդրոհանգույց.  
խնդիր 5. Փորել ու ապամոնտաժել 800 գծմ չգործող անձրևացման ջրագիծը.  
խնդիր 6. Փորել նոր ջրագծի խրամատն ու տեղադրել խողովակները.  
խնդիր 7. Խողովակները մեկուսացնել հակակոռոզիոն շերտով ու կատարել գրունտի հետլիցք և հարթեցում:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ*

Աշխատանքների ծավալի հաշվարկման արդյունքում (օգտվելով ՍԱԴ նորմատիվներից), ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները գնահատվել են 2.4 մլն դրամ:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. 2-րդ եռամսյակում:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

#### *ԾՐԱԳՐԻՑ ՄՊԱՍՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի իրականացմամբ կբացառվեն մինչև 50% հասնող ջրի կորուստները, ջուրը հանդամաս կհասնի ավելի արագ, կբարելավվի մոտ 77 հա հողամասի ժամանակին ոռոգելու գործը՝ (13 հա -109 կողի, 52 հա -104 ,105,106,107, 108 կողերի ու 6 հա 102 կողի հանդամասերից: Ջրագծի անցկացման ու ոռոգվելիք հողամասերի սխեմատիկ պլանը-առդիր մեկ էջից):



## ԾՐԱԳԻՐ 5

### ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է բնակավայրի տարածքում կառուցել 3 խաղահրապարակ, երկուսը՝ 200-ական և մեկը՝ 150 քմ տարածքով:

Խաղահրապարակներում տեղադրել խաղասարքեր:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագրի նպատակն է մանուկների համար ստեղծել խաղատեղեր սպորտի ու ժամանցի համար:

Ծրագրի իրագործումն ունի խնդիրներ՝

Խնդիր 1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր.

Խնդիր 2. Տարածքները մաքրել շինարարական աղբից.

Խնդիր 3. Կառուցել խաղահրապարակների հիմնատանկն ու ցանկապատել տարածքները.

Խնդիր 4. Տեղադրել տարբեր խաղասարքեր ու տաղավար:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ծրագրի իրականացման ֆինանսական միջոցները գնահատվում են 2.0 մլն դրամ (հաշվումները նախնական են ու մոտավոր՝ տարածքների մաքրում, հիմնատակի կառուցում, ցանկապատում, ներառյալ տաղավարը, խաղասարքերի պատրաստում և տեղադրում-աշխատուժը հաշվարկված է ըստ ՍԱԴ նորմատիվների):

Ծրագիրը իրագործվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

#### *ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

2017 թ. 3-րդ եռամսյակում 2 խաղահրապարակ. №4 փողոցին կից տարածքում 150 քմ-1.0 մլն դրամ, ՅՄԴ կից տարածքում 200 քմ-1.0 մլն դրամ և 2018 թ. 3-րդ եռամսյակում №15 փողոցին կից տարածք՝ հին խանութի տեղում 200 քմ-1.0 մլն դրամ:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

#### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Համայնքում կստեղծվեն բարեկարգված ու խաղասարքերով ապահոված 3 խաղահրապարակներ, որտեղ մանուկները կանցկացնեն իրենց ազատ ժամանակը: (Խաղահրապարակների կառուցման տեղանշումը սխեմատիկ պլանով- առդիր 1 էջից:)

## ԾՐԱԳԻՐ 6

### ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Ծրագիրը նախատեսում է գյուղի մոտ 900 հա արոտներում կառուցել 4 աղբյուր՝ արոտի անասուններին խմելու ջրով ապահովելու համար և 1 աղբյուր էլ գյուղամիջում:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագրի նպատակն է արոտի անասուններին ապահովել խմելու ջրով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծում տալ ներքոհիշյալ խնդիրներին, խնդիր 1. Անցկացնել մոտ 750 գծմ ջրագիծ.  
խնդիր 2. Կառուցել 5 հատ 1800 լ տարողության մետաղյա կիսատաշտ.  
խնդիր 3. Կառուցել 4 դիտահոր ակունքներում.  
խնդիր 4. Կառուցել տաշտակների հիմքերն ու տեղադրել տաշտակները.  
խնդիր 5. Կառուցել աղբյուրից ջրի հեռացման առուներ:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են մոտ 1.7 մլն դրամ (աշխատուժի հաշվարկը կատարվել է ըստ ՍԱԴ-ի նորմատիվների),
- Ծրագրի իրագործումը նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը իրականացվելու է 2017 թ. 2-րդ, 3-րդ եռամսյակներում՝ 3 աղբյուր և 2018 թ. 2-րդ եռամսյակում՝ 2 աղբյուր:

#### *ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

- Արոտի անասունը կապահովվի խմելու ջրով: Այդ ջուրը կվերցվի բնական ակունքից, որը պիտանի է նաև մարդու խմելու համար,
- Կբացառվեն հովիվների կողմից գյուղը սնող ջրագծերի անհարգի վնասումը.
- Անասունների խմելու ջրի բացակայության պատճառով գյուղի արևելյան հատվածի մոտ 400 հա արոտ համարյա չի օգտագործվում: Աղբյուրների գոյության պարագայում կօգտագործվի ավելի էֆեկտիվ:
- «Բոբիկներ» կոչվող հանդամասում կառուցվելիք 2 աղբյուրների ջուրը (0.5 լ/վրկ) ձմռան ամիսներին կմիացվի գյուղը սնուցող խմելու ջրագծին:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

## ԾՐԱԳԻՐ 7

### ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Նախատեսված է գյուղի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության համար տեղադրել լամպերի 75 կետեր, որոնք կապահովեն գիշերային ժամերի անհրաժեշտ լուսավորությունը, գյուղի ամբողջ տարածքում:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ է հետպնդում համայնքում գիշերային ժամերին ունենալ անհրաժեշտ փողոցային լուսավորություն: Ծրագրի կատարման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Տեղադրել էլեկտրասյուներ  $d=150$ մմ մետաղային խողովակներով.

Խնդիր 2. Մոնտաժել լուսավորության լամպերն ու տեղադրել ավտոմատ լուսառեկտանցատիչ ու ժամային հաշվիչ:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ծրագրի արժողությունը 6500 հազ. դրամ է, որը իրականացվելու է համայնքի միջոցներով:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագրի իրականացվելու է 2017-2018 թ.թ. ընթացքում:

#### *ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Համայնքի կենտրոնն ու փողոցները կդառնան լուսավոր, գիշերային ժամերին հետիոտնի համար հնարավորություն կստեղծվի ազատ տեղաշարժվելու:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

## ԾՐԱԳԻՐ 8

### ԳԵՐԵՉՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Ծրագիրը նախատեսում է գյուղի գործող գերեզմանոցի ցանկապատում մետաղական ցանցով: Ցանկապատի տակ պետք է կառուցվի երկաթբետոնյա հիմք, իսկ վերնամասը եզրափակվի մետաղական անկյունակով, գերեզմաններում տեղադրվելու է հանգստաքար: Ցանկապատի ընդհանուր երկարությունը՝ 600 գծմ:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագրի նպատակն է ունենալ պաշտպանված ու խնամված գերեզմանոցներ: Ծրագրի խնդիրներն են.

Խնդիր 1. Կառուցել մեթոդական կոնստրուկցիայի 600 գծմ երկարության ցանկապատ.

Խնդիր 2. Տարածքի առանձին հատվածներ մաքրել հին շինությունների մնացորդներից ու դարձնել մեքենաների կայանատեղի.

Խնդիր 3. Գերեզմանոցում տեղադրել հանգստաքար:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 3.2 մլն դրամ:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքային բյուջեի միջոցներով 2017 թ. ընթացքում:

#### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Գերեզմանոցները կդադարեն «արոտատեղի» լինենուց, կբացառվեն անհարգի վնասները:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

## ԾՐԱԳԻՐ 9

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒՄ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ԱՂԲԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է ամենօրյա ուշադրություն համայնքի շրջակայքի, հասարակական կենտրոնի ու ներհամայնքային փողոցների մաքրությանը, հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ է հետապնդում համայնքում ունենալ

- Սանիտարական ապահով վիճակ,
- Մաքուր փողոցներ,
- Չաղտոտված շրջակա միջավայր,

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել`

Խնդիր 1. Հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն (մնացած ժամանակ ըստ անհրաժեշտության): Տեխնիկայի վարձակալումն ու դիզ. վառելանյութով ապահովումը գյուղապետարանի միջոցներով, իսկ բարձունը` բնակիչների ուժերով:

Խնդիր 2. Կոյուղաջրերի համար օգնել բնակիչներին ունենալու ավտոնոմ սեպտիկ հորեր:

Խնդիր 3. Աղբը տեղափոխել միայն հատուկ դրա համար հատկացված տարածք:

Խնդիր 4. Կազմակերպել լրացուցիչ շահագրգռիչ միջոցառումներ բնակավայրի մաքրությունը ապահովելու նպատակով:

### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 0.5 մլն դրամ համայնքային բյուջեի միջոցներից:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը նախատեսվում է կատարել ամեն տարի` 2009-2010-2011-2012 թ.թ:

### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի կատարմամբ կբարելավվի բնակավայրի ու շրջակա միջավայրի սանիտարական վիճակը, կբացառվեն տնտեսական աղբի կուտակումները բնակավայրի տարածքում:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

## ԾՐԱԳԻՐ 10

### ԾԱՌԱՏՆԿՈՒՄ

#### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է տարեկան 500 դեկորատիվ ու մրգատու ծառերի տնկում կանաչ գոտիներում, դպրոցամերձ տարածքում, ճամփեզրերին ու դաշտապաշտպան գոտիներում:

#### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը, հիմնել նոր դաշտապաշտպան անտառագոտիներ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները.  
Խնդիր 1. Համայնքի միջոցներով տարեկան ձեռք բերել 500 տնկի,  
Խնդիր 2. Նախատեսել ծառատունկի գոտիները,  
Խնդիր 3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարակական աշխատանքի կարգով, նպատակ ունենալով մարդկանց մոտ բարձրացնելու պատասխանատվությունը:

#### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ*

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 1.25 մլն դրամ 5 տարվա համարյուրաքանչյուր տարվա համար 0.25 մլն դրամ համայնքային բյուջեի միջոցներով:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը իրագործվելու է ամեն տարի վաղ գարնանը կամ ուշ աշնանը:

#### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի իրականացմամբ կավելանան կանաչ գոտիների տարածքները, կստեղծվեն դաշտապաշտպան գոտիներ:

#### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

# ԾՐԱԳԻՐ 11

## ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գազաֆիկացումը համայքի համար դիտվում է որպես թիվ 1 հիմնախնդիր, որովհետև դրանով է պայմանավորված գյուղի տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնահարցը: Գազաֆիկացումը Կառնուտցու համար նշանակում է տարեկան 120-ից 150 հազ. դրամի տնտեսում, մեծ քանակությամբ օրգանական պարարտանյութի օգտագործում, հողամասերի մշակովի տարածքի ավելացում, տնտեսական կյանքի աշխուժացում, կենցաղային ծառայությունների մատուցում, մթերման ու վերամշակող ձեռնարկությունների գործարկում, կրթական ու մշակութային օբյեկտների բնականոն աշխատանք, բնակչության ներհոսք:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- Ապահովել կրթական ու հասարակական օբյեկտներին ու բնակչությանը բնական գազով ,
- Աշխուժացնել գյուղի տնտեսությունն ու մարդուն դարձնել սոցիալապես ավելի ապահով,
- Գյուղացուն պահել գյուղում:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը բերել աշխատանքային տեսքի (գնային փոփոխության գործակիցների առումով).

Խնդիր 2. Ապահովել համայնքի կողմից 10 % ներդրում աշխատանքների իրականացման համար,

- Ծրագրի իրականացման տնտեսական հիմնավորումներով դիմել ՀՀ Շիրակի մարզպետարան, և բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել «Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրերի իրականացման գրասենյակի» ծրագրում գյուղի գազաֆիկացման ծրագիրը ընդգրկելու համար:

### ԾՐԱԳՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, կփոխվի գյուղի դեմքը, կաշխուժանա տնտեսությունը, գյուղացին կդառնա ավելի վճարունակ, կկապվի գյուղին, կկրճատվի արտագնա աշխատանքի մեկնողների թիվը, դպրոցն ու հասարակական օբյեկտները կջեռուցվեն ամբողջությամբ, դպրոցում կբարձրանա հաճախելիությունն ու առաջադիմությունը:

Գյուղում կգործարկվեն վերամշակող ձեռնարկություններ, կմատուցվեն կենցաղային ծառայություններ:

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսվում է 3600 գծմ միջին ճնշման և 4500 գծմ ցածր ճնշման խողովակաշարի անցկացում և մեկ կարգավորիչ-բաշխիչ կետի տեղադրում: Ծրագրի նախահաշվային արժեքը գնահատվում է 72.0 մլն դրամ, որից համայնքային ներդրումը կազմում է 7.2 մլն. դրամ:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել X-ով:

### ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒՄ

Ծրագիրը իրականացնելու է «ԳԲԱԾԻԳ»-ը: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

## ԾՐԱԳԻՐ 12

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԼՈՒՍԱՂՔՅՈՒՐ» ՄԱՏՈՒՌԻ,  
ՆԱԽԿԻՆ ԱՎՏՈՐԲԱԶԱՅԻ ԵՎ ԿԱՌՆՈՒՄԻ ԶՐԱՄԲԱՐ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐԴԻՆ ԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ  
ՄԱՔՐՈՒՄ / ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔԻՑ/ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է մաքրել ու հնարավորության չափով նախնական տեսքի բերել «Լուսաղբյուր» մատուռի շրջակա տարածքը (մոտ 10 հա-սխեմատիկ պլանը կցվում է), նախկին ավտոբազայի տարածքը ու ջրամբար տանող ճանապարհի կից տարածքը, որոնք լցվել են շինարարական աղբով 1988 թ. երկրաշարժից հետո:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ է հետապնդում մաքրել արոտավայրերը շինաղբից, տարածքը բերելով հնարավոր նախնական բնական տեսքի:

Աշխատանքների կատարման համար մրցույթի արդյունքում կնքել աշխատանքային պայմանագիր համապատասխան ծավալի ու պահանջի ձևակերպմամբ:

### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐԸ*

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 1.2 մլն դրամ, նախատեսվում է կատարել համայնքային բյուջեի միջոցներով:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագիրը նախատեսվում է իրագործել 2018 թ. II-III եռամսյակների ընթացքում:

### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի իրականացմամբ մոտ 10 հա հանդամաս կմաքրվի շինաղբից, արոտավայրը կօգտագործվի նպատակային:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:



## ԾՐԱԳԻՐ 13

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ*

Նախատեսվում է հիմնանորոգել մշակույթի տան ու գրասենյակի շինությունները, կառուցել սանդուղքներն ու սանդղահարթակները, վերանորոգել տանիքներն ու կառուցել 200 քմ մակերեսով ծաղկանոցներ:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագրի նպատակն է շինությունները դարձնել բարեկարգ ու օգտագործելի, ունենալ գրադարան: Մշակույթի տունը ծառայեցնել իր նպատակին, կազմակերպելով ազատ ժամանց ու միջոցառումներ, գյուղապետարանի աշխատակազմի համար ստեղծել նորմալ աշխատանքային պայմաններ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝  
Խնդիր 1. Վերանորոգել շենքերի տանիքները, ներկելով արտաքին փայտյա մասեր.  
Խնդիր 2. Կատարել ներքին հարդարման աշխատանքներ (պաստառապատում, ներկում, հատակի նորոգում, ապակեպատում, դռների նորոգում, ներքին էներգոհամակարգի մոնտաժում):  
Խնդիր 3. Արտաքին սանդուղքների ու սանդղահարթակների կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարից:

### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ*

Ըստ նախնական չափագրման ու հաշվարկի, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 5.0 մլն դրամ, 2.0 մլն դրամ գյուղապետարանի շենքի վերանորոգման և 3.0 մլն դրամ մշակույթի տան վերանորոգման համար: Պահանջվող ֆինանսական միջոցների 50 տոկոսը նախատեսվում է իրականացնել «Վարձատրվող հասարակական աշխատանքների» ծրագրով, իսկ 50 տոկոսը համայնքային բյուջեով:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Մշակույթի տան հիմնանորոգումը նախատեսվում է իրագործել 2017 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում: Գյուղապետարանի շենքի հիմնանորոգումը նախատեսվում է իրագործել 2018 թվականին:

### *ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Ծրագրի իրագործման արդյունքում համայնքում նորմալ կգործի գրադարան, գյուղապետարանի աշխատակազմի համար կապահովվի նորմալ աշխատանքային պայմաններ: Մշակույթի տունը վերանորոգումից ու գույքավորումից հետո լիարժեք կծառայի իր նպատակին և միանգամից 40-50 մարդ հնարավորություն կունենան այնտեղ զբաղվել ու անցկացնել իրենց ազատ ժամանակը:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի տեղակալը:

## ԾՐԱԳԻՐ 14

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԻ  
ՀԱՄԱԼՐՈՒՄ, ՄԱՐՁԱԳՈՒՅՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ԳՐՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

### *ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Ծրագրով նախատեսվում է մշակույթի տան ու գյուղապետարանի շենքի վերանորոգումից հետո, դրանք համալրել անհրաժեշտ գույքով, համալրել նաև գրադարանի գրքային ֆոնդը: Ձեռք բերել 2 թեմիսի սեղան, 25 զույգ դահուկ, ֆուտբոլի մարզադաշտի համար անհրաժեշտ մարզագույք, ծանրաձող և ըմբշամարտի գորգ:

### *ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

Ծրագիրը նպատակ ունի աշխուժացնել համայնքի մշակութային ու մարզական կյանքը, արդյունավետ կազմակերպել համայնքի բնակիչների հանգստի ու ազատ ժամանցը:

Ծրագրի լուծումն ունի մեկ խնդիր.

Նախատեսել ու ապահովել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

### *ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ*

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են՝

Մշակույթի տան գույքի համալրում՝ 2.0 մլն դրամ.

2017 թ.-0.6 մլն դրամ,

2018 թ.-0.8 մլն դրամ,

2019 թ.-0.6 մլն դրամ:

Գյուղապետարանի գույքի համալրում՝ 1.0 մլն դրամ.

2017 թ.-0.4 մլն դրամ,

2018 թ.-0.6 մլն դրամ:

Գրադարանի գրքային ֆոնդի համալրում՝ 0.3 մլն դրամ.

2018 թ.-0.3 մլն դրամ:

Մարզագույք՝ 1.5 մլն դրամ.

2018 թ.-0.5 մլն դրամ,

2019 թ.-0.5 մլն դրամ:

Ծրագիրն իրականացվում է համայնքային բյուջեի միջոցներով:

### *ՄՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

Համայնքը կունենա հարմարավետ ու կահավորված մշակույթի տուն, աշխատանքային նորմերին համապատասխան գույքով ապահովված գյուղապետարանի շենք, գրադարան՝ գրքային ֆոնդով ապահովված, համայնքի մարզիկների պահանջներին մասնակի բավարարող մարզագույք:

### *ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ*

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

**ԾՐԱԳԻՐ 15**

**ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

***ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ***

Ծրագրով նախատեսվում է կառուցել մանկապարտեզի շենք կոմունալ հարմարություններով, ջեռուցմամբ ու տարածքի բարեկարգմամբ:

***ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ***

Ծրագրի նպատակն է ունենալ մանկապարտեզի շենքի կապիտալ կառույց, կոմունալ բոլոր հարմարություններով ու բարեկարգված կից տարածքով:

***ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ***

- Խնդիր 1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում,
- Խնդիր 2. Սպասարկման տարածքի բարեկարգում,
- Խնդիր 3. Մրցութային կարգով շինարարության իրականացում,
- Խնդիր 4. Մանկապարտեզի շենքի գույքավորում,
- Խնդիր 5. Ֆինանսական միջոցների կուտակում ու ֆինանսական այլ աղբյուրների հայթհայթում:

***ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ***

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են 30.0 մլն դրամ,որից 10.0 մլն. դրամը նախատեսվում է իրագործել համայնքային բյուջեի միջոցներով, իսկ 20.0 մլն.-ը՝ ներգրավվող այլ ֆինանսական միջոցներով: Անհրաժեշտ է աշխատանք տանել ֆինանսավորման այլ աղբյուրներ փնտրելու ուղղությամբ՝ բարերարներ, ՀՀ կառավարության հատկացում, հանգանակում և այլն:

***ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ***

Ծրագրի իրականացման ժամկետ է նախատեսվում.  
2019 թ.-5.0 մլն դրամ,  
2020 թ.-15.0 մլն դրամ,  
2021 թ. - 10.0 մլն դրամ:

***ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ***

Ծրագրի իրականացմամբ համայնքում կգործի նախակրթական հիմնարկ 40 երեխաների համար, իր բոլոր կոմունալ հարմարություններով, խաղահրապարակով ու սպասարկող տարածքով:

***ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ***

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ:Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարը:

ԿԱՌՆՈՒՄ ՇԱՄԱՅՆՔԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	2013	2014	2015	2016
1.Գյուղացիական տնտեսությունների թիվը	252	252	250	250
ա. անհատական տնտեսություններ	252	252	250	250
բ. կոլեկտիվ տնտեսություններ				
գ. պետական տնտեսություն				
2.Գյուղ.ապրանքների հիմնական տեսակների արտադրությունը				
ա. ցորեն,գ	3599	3839	3974	5320
բ. գարի,գ	2762	1995	2073	2465
գ. կարտոֆիլ,գ	23058	19090	14020	31500
դ. կաղամբ,գ	5088	10848	7550	8040
ե. բանջարաբոստ. կուլտուրաներ,գ	43264	54899	39051	54330
զ. կաթ,գ	5100	5300	5200	5250
է. միս,գ	150	150	130	128
ը. բուրդ,գ	4	7	6	5
թ. ձու,հատ	92000	100000	80000	90000
ժ. մեղր,գ	20	30	45	50
3.Ցանքատարածություններ,հա				
ա. հացահատիկ	237	225	205	244
բ. կարտոֆիլ	82	95	70	90
գ. բանջարաբոստ. կուլտուրաներ	135	126	122	154
դ. կաղամբ	16	20	15	20
ե. առվույտ	45	43	53	50
զ. կորնզան	58	64	67	97
4.Անասնազվխաքանակ,հատ				
ա. խոշոր եղջերավոր անասուններ	1183	1325	1178	1080
այդ թվում կովեր	576	606	505	488
բ. մանր եղջերավոր անասուններ	480	589	632	527
գ. խոզեր	110	66	43	212
դ. թռչուններ	1740	1863	1798	1752
ե. մեղվաբուսանիքներ	104	112	122	114

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ՄԵՔԵՆԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՅԻ

ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

3.

Զ/Զ	Անվանումը, մակնիշը	Քանակը	Ֆիզիկական վիճակը
1.	Հացահատիկահավաք կոմբայն Նիվա-ՇԿ 5	3	սարքին
2.	Խոտհնձիչ կոմբայն Նիվա-ՇԿ 5	1	սարքին
3.	Խոտհնձիչ E-302	1	սարքին
	Թրթուրավոր տրակտորներ		
4.	DT-75	15	սարքին 10 հատ
5.	Անվավոր տրակտորներ, MTZ-80	3	սարքին
6.	MTZ-82	2	սարքին
7.	T-40	4	սարքին 3 հատ
8.	Կուլբոտա	3	սարքին 2 հատ
9.	NARDI	2	սարքին
10.	Յոււզ	4	սարքին
11.	T-70	4	սարքին 3 հատ
12.	T-28	1	անսարք
13.	T-16	6	սարքին 5 հատ
14.	T-18	3	սարքին 2 հատ
	Գյուղ գործիքներ		
15.	Հացահատիկի շարքացան	6	սարքին
16.	Կուլտիվատորներ	12	սարքին
17.	Գութաններ	14	սարքին 11 հատ
18.	Մամլիչ	3	սարքին
19.	Կարտոֆիլահավաք կոմբայններ	6	սարքին 5 հատ
20.	Կարտոֆիլի շարքացան	6	սարքին 6 հատ
21.	Խոտհնձիչ(տրակտորի)	3	սարքին
22.	Կցասայլակներ	15	սարքին 12 հատ
23.	Առու մաքրելու գութան	6	սարքին
	Բեռնատար մեքենաներ		
24.	Ուրալ	1	սարքին
25.	Կամազ	3	սարքին
26.	Զիլ	7	սարքին 6 հատ
27.	Գազ-53	5	սարքին
28.	Գազ-52	13	սարքին 9 հատ
29.	Մազ	2	սարքին

**ԿԱՌՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

	Ցուցանիշները	Չափի միավոր	2013 թ. փաստ	2014 թ. փաստ.	2015 թ. փաստ.	2016 թ. նախատ.
1.	Համայնքի տարածքը	հա	1940	1940	1940	1940
2.	Բնակչության թիվը	մարդ	1128	1143	1148	1153
3.	Ծնունդ	մարդ	8	18	16	12
4.	Մահացություն	մարդ	6	5	7	4
5.	Աշխ. ռեսուրսները, այդ թվում զբաղվածները ըստ տնտ. ճյուղերի	մարդ	682 625	625 584	667 645	681 667
6.	Գործազրկության մակարդակը	%	8	7	3	3
7.	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3	3	3
8.	Պահուստային հողեր	հա	119	119	119	119
9.	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	94	96	96	96
10.	Խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	14	14	14	14
11.	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	12	12	12	13.5
12.	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	512	512	512	512
13.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9.14	9.14	9.14	9.14
14.	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	9.14	8.2	6.9	5.8
15.	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ. քմ	12.6	12.8	13.0	13.0
16.	Բնակելի տան կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	46	45	49	52
17.	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը, Լ	1 օր	100	100	100	100
18.	Ջրի կորուստները ցանցում	%	15	10	10	10
19.	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	138	142	135	137
20.	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	16	17	18	18
21.	Գյուղապետարանի և ենթակառուցվ. աշխատողների թիվը	մարդ	9	9	9	9

Կառնուտի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի, բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:


Ելնելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

2017-2021 թ.թ. համայնքային բյուջեները պետք է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Համայնքի զարգացման կոնկրետ ծրագրեր կարելի է ներկայացնել ՀՀ կառավարություն, Շիրակի մարզպետարան, լրացուցիչ ներդրումներ հայթհայթելու նպատակով: Նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը կազմվել է համայնքի ռազմավարության առաջնահերթ ծրագրերի ընդգրկման ու ֆինանսական միջոցների ապահովման հնարավոր համադրմամբ ու իրագործելիության բարձր հավակնությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝





## Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի Ֆիզիկական վիճակը`

Զ/Զ	Անվանումը	Միավորը	Ֆիզիկական վիճակը	Արժեքը	Ծանոթություն
1.	Գյուղապետարանի շենք	1	բավարար		Ժամանակավոր կառույց
2.	Մշակույթի տուն	1	բավարար		Ժամանակավոր կառույց
3.	Կալատեղի պահեստներ	2	բավարար		Չեն գործում
4.	Սիլոսի խրամատ	2	բավարար		Չեն գործում
5.	Կալատեղի պարիսպ	1380 քմ	կիսաքանդ		Օտարման ենթակա
6.	Կիսակառույց ռչխարանոցներ	2	կիսակառույց		Օտարման ենթակա
7.	Մանկապարտեզի մասնաշենք	3	կիսակառույց		Օտարման ենթակա
8.	Խմելու ջրի ՕԿՋ	1	վերանորոգված		
9.	Խմելու ջրագծեր	10500 գծմ	մասնակի ծերանորոգված		Վերանորոգման ենթակա
10.	Վառելանյութի տարաներ	5	բավարար		Օտարման ենթակա
11.	Կալատեղի կշեռք	1	անսարք		Օտարման ենթակա
12.	Ավտոբուս «Կուբան»	1	անսարք		Օտարման ենթակա
13.	Տրակտոր S-16	1	անսարք		Օտարման ենթակա
14.	Ավտոմեքենա «Վագ-2121»	1	աշխատող		
15.	Ոռոգման փակ ջրագծեր	7200 գծմ			1440 գծմ վերանորոգման ենթակա
16.	Ոռոգման բաց ջրագծեր	6900 գծմ			2900 գծմ վերանորոգման ենթակա
17.	Կամուրջներ	9			4 կամուրջը վերանորոգման ենթակա են
18.	Մարզադաշտ	1			Կառուցապատման ու բարեկարգման ենթակա
19.	Ներհամայնքային ճանապարհներ	29.14 կմ 63980 քմ			Վերանորոգման ենթակա 6.9/41580